## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (APL-2)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 8 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (APL-2)» վարկային համաձայնագրում ամրագրված

պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 14.03.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Ս. Խաչատրյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1.Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (APL-2)» վարկային համաձայնագիրը /այսուհետ՝ համաձայնագիր/ ստորագրվել է 2011 թվականի հունվարի 26-ին:

2. Համաձայնագրի նպատակն է լրացուցիչ ֆինանսավորում տրամադրել Սկզբնական ծրագրին առնչվող գործողությունների իրականացման համար:

3. Համաձայնագրի համաձայն՝ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնագրում սահմանված պայմաններով Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է տասնինը միլիոն ԱՄՆ դոլարին (19.000.000) համարժեք գումար (այսուհետ՝ Վարկ), որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով՝ համաձայնագրի դրույթներին համապատասխան:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

- վճարել Սկզբնավճար Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%) համապատասխան (հոդված II, կետ 2.03),
- վճարումներ կատարել յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին եւ օգոստոսի 15-ին (հոդված II, կետ 2.05),
- մարել վարկի մայր գումարը 2021թ. փետրվարի 15-ից մինչեւ 2035 թվականի փետրվարի 15-ը (մայր գումարի վճարվելիք տոկոսային մասնաբաժինը պետք է կազմի

3.33%, իսկ 2035 թվականի օգոստոսի 15-ին մայր գումարի վճարվելիք տոկոսային մասնաբաժինը պետք է կազմի 3.43%) (հոդված II, կետ 2.06 եւ Լրացում 3, կետ 1),

- հայտարարել Ծրագրի նպատակների իր հանձնառության մասին եւ այդ նպատակով իրականացնել Ծրագիրն ՀՀ առողջապահության նախարարության միջոցով՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի դրույթներին համապատասխան (հոդված III, կետ 3.01),
- առանց սահմանափակելու համաձայնագրի 3.01-ին բաժնի դրույթները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Բանկի միջեւ այլ համաձայնության բացակայության դեպքում, ապահովել, որ Ծրագիրն իրականացվի համաձայնագրի 2-րդ Լրացման դրույթին համապատասխան (հոդված III, կետ 3.02),
- առանց 3.01-ին բաժնի դրույթների սահմանափակման եւ բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետությունը եւ Բանկը ձեռք են բերել այլ համաձայնություն, մինչեւ Ծրագրի ավարտը Ծրագրի հաշվին պահպանել հաշվեկշիռ, որի գումարը բավարար է Ծրագրի իրականացման հաջորդ երեք ամիսների համար (Լրացում 2, Բաժին 1, Ա.1),
- մինչեւ Ծրագրի ավարտը պահել կազմկոմիտե, որը բաղկացած է ՀՀ առողջապահության նախարարության (ԱՆ) եւ շահագրգիռ այլ կարեւոր կողմերի ներկայացուցիչներից, եւ որը պատասխանատու է Ծրագրի իրականացումն ուղղորդելու եւ համակարգելու, իրավասությունների շրջանակը սահմանելու, տեխնիկական գնահատումներին մասնակցելու եւ ռազմավարական տեխնիկական աջակցության միջոցառումների շուրջ խորհրդատուների հետ անմիջականորեն աշխատելու համար (Լրացում 2, Բաժին 1, Ա.2),
- պահել Հիվանդանոցների օպտիմալացումը եւ արդիականացումը համակարգող կոմիտե (Լրացում 2, Բաժին 1, Ա.3),
- Ծրագրի Բ մասի իրականացման նպատակով ընտրված յուրաքանչյուր մարզի հանձնարարել կնքել Բանկի պահանջները բավարարող իրականացման համաձայնագիր ԱՆ-ի, հիվանդանոցի տնօրենի եւ մարզպետի միջեւ՝ Մարզի հիվանդանոցային համակարգի օպտիմալացման պլանն իրականացնելու համար (Լրացում 2, Բաժին 1, Ա.4 ա)),
- Ծրագրի Բ մասի իրականացման նպատակով Պետական առողջապահական գործակալության կազմում ստեղծել Ազգային առողջապահական հաշիվների ստորա-

բաժանում եւ պետական բյուջեից հատկացնել համարժեք ֆինանսական միջոցներ՝ 2013թ. առողջապահական ծախսերի ուսումնասիրություն կատարելու համար, եւ վերանայել տեղեկատվական եւ վերլուծական հանրապետական կենտրոնի կանոնադրությունը՝ 2012 թվականից սկսած առողջապահության ոլորտի գործունեության մասին զեկույցների մշակումն օրինականացնելու համար, եւ ապահովել պետական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցների հատկացումը (Լրացում 2, Բաժին 1, Ա.5),

- ապահովել, որ Ծրագիրն իրականացվի Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթ-ներին համապատասխան (Լրացում 2, Բաժին 1, Բ),
- մոնիտորինգի ենթարկել եւ գնահատել Ծրագրի առաջընթացը եւ պատրաստել Ծրագրի հաշվետվություններ՝ Ընդհանուր պայմանների 5.08-րդ բաժնի դրույթներին համապատասխան եւ Բանկի համար ընդունելի ցուցանիշների հիման վրա, ապահովել, որ Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվություն ընդգրկի օրացուցային մեկ կիսամյակ ժամանակահատված եւ ներկայացվի Բանկ ոչ ուշ, քան հաշվետվության մեջ ներառված ժամանակահատվածի ավարտից մեկ ամիս անց (Լրացում 2, Բաժին II, Ա.),
- աուդիտի ենթարկել ֆինանսական հաշվետվությունները՝ Ընդհանուր պայմանների 5.09-րդ բաժնի «բ» կետի դրույթների համաձայն: Ֆինանսական հաշվե-տվությունների յուրաքանչյուր աուդիտում ընդգրկել մեկ ֆինանսական տարվա ժամանակահատված եւ այն ներկայացնել Բանկ ոչ ուշ, քան այդ ժամանակահատվածի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում (Լրացում 2, Բաժին II, Բ.3)),
- Վարկի միջոցների հաշվին ֆինանսավորել Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների, խորհրդատուների ծառայությունների, վերապատրաստման եւ գործառնական ծախսերի միայն 75%-ը (Լրացում 2, Բաժին IV, Ա. կետի Ա.2 ),

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հան-րապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

**1.** 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Առողջապահական

համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (APL-2)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 ապրիլի 2011 թվականի
ՍԴՈ-948